

HANDES AMSORYA  
ZEITSCHRIFT FÜR ARMENISCHE PHILOLOGIE

ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Table with 2 columns: Article title and page number. Includes entries like 'Ալիանան Հ. Ն.՝ Եղիշէ Վարդապետ եւ իր Պատմութիւնն Հայոց պատերազմին...' and 'Տաշեան Հ. Յ.՝ Հաթեր եւ Ուրարտեանք...'.

INHALT

Table with 2 columns: Author and page number. Includes entries like 'Akinian P. N.: Elisäus Vardapet und seine Geschichte des Armenischen Krieges...' and 'Dashian P. J.: Hettiter und Urartäer...'.

ՄԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ  
ՎԻԵՆՆԱ



Herausgeber, Eigentümer und Verleger:

Mechitharisten-Kongregation in Wien, VII. Mechitharistengasse 4.

Druck der Mechitharisten-Buchdruckerei in Wien, VII. Mechitharistengasse 4.

ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԵՂԻՇԷ ՎԱՐԴԱՊԵՏ

ԵՒ ԻՐ ՊԵՏՄՈՒԹԻՒՆՆ ՏՆՈՑ ՊԵՏՐԱՉՄԻՆ  
ՔԵՆԵԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹԻՆ

(Շարունակութիւն):

23. ՅԱԶԿԵՐՏ Բ. = ԽՈՍՐՈՎ Ա. ԱՆՈՒՇԻՐՈՒԱՆ

Ա. Իշխանը:

Եղիշէի պատմութեան մէջ ամէնէն կարկառուն անձը, որ կը կանգնի մեր առջեւ, ժամանակակից արքայից արքայի դէմքն է: Անոր շուրջը կը դառնայ պատմութեան ծիրը. նա է որ ընթացք կու տայ պատմական դէպքերուն: Ոչ քաղաքական դէպքերն են, որ կը հետաքրքրեն պատմագիրը, այլ այն եկեղեցական-քաղաքական խառն իրադարձութիւնները, որոնք տեղի ունեցան արքայից արքայի օրով եւ անոր հրամանաւ, ոչ միայն հայկական հողամասին վրայ, այլ առ հասարակ «ընդ սուրբ եկեղեցիսն», որոնք կը դառնան սասանեան տիրապետութեան տակ:

Անշուշտ արքայից արքայի կեանքը, որ սնած տողորուած էր զբաղաւորական-մաղդէական վարդապետութեամբ, չէր կրնար շլացնել քրիստոնէական հրահանգներու մէջ զարգացած մատենագիր մը. որչափ ալ հաշականուն ըլլային անոր գործերը եւ արդիւնաւէտ պետութեան եւ ժողովրդեան համար, չէին կրնար գոհ ձգել պատմագիր մը, որ իւր եկեղեցւոյն շահերու դէտակն է եւ յանձին վեհապետին կը տեսնէ այլազգին եւ արեւելեան բռնապետը: «Բայց մեք թէպէտ եւ չունիմք հրաման բամբասել զիշխանս, եւ ոչ գովողք կարեմք լինել այնմիկ, որ աստուածամարտն լինի[ն]: Այլ զանցս իրացն պատմեմ, որ ի նմանէ ընդ սուրբ եկեղեցիսն էանց<sup>1</sup>, եւ ոչ զանդաղիմ» (Բ. 13):

<sup>1</sup> Թէ հեղինակին միտքը ամբողջ Պարսկաստանի քրիստոնէութիւնը կ'ընդգրկէ, եւ ոչ քրիստոնէայ

Ո՞վ է այդ աստուածամարտ իշխանը: — Բ. — Է. Յեղանակները կը լռեն տալ անոր անունը: Անգամ մը միայն, Ա. Յեղանակին սկիզբը կ'ըլլայ անոր անունն յիշատակութիւնը, եւ այն այնպիսի մութ նախադասութեան մը մէջ, ուր պատմագիրը կարծէք զիտմամբ կը խուսափի բացայայտ արտայայտուելի. «... Աստուածաշուտութիւնն բարձրագոյն կամակարութեամբ երեւելի լինէր յաշարհին Հայոց՝ ի սկզբան(է)՝<sup>2</sup> աշուրութեանն Շապուհ արքայից արքայի մինչեւ յայն յերկրորդ Յազկերտի արքայից արքայի՝ որդւոյ Վռամայ. գոր Եգիտ սատանայ իւր գործակից. եւ զամենայն մթերեալ թոյնսն թափեաց ի բաց, եւ ելից զնա իրրեւ զպատկանդարան դեղովք» (Ա. 7):

Սուրբ առանց տարակուսի Վռամ Ե. ի որդւոյն՝ Յազկերտ Բ. ի մասին է, որ իշխեց Սասանեան դահին վրայ 438—457<sup>3</sup>: Այսպէս ստիպուած ենք հասկնալ, քանի որ պատմագրին ձգտումն է 438—460 տարիներու դէպքերը պատմել: Անշուշտ արդար պահանջք պիտի նկատուէր, որ պատմագիրը տար ներածաբար գոնէ կարճատու տեղեկութիւններ իշխանի մը մասին, որուն գործերուն պատմիչը պիտի ըլլար: Պարզապէս քահանայքի լսող մըն է այս զանցառութիւնը: Կան լուրջ պատճառներ կասկածելու:

Ինչպէս տեսանք վերադոյն (§ 21) պարբերութեան առաջին մասը փոխ առած էր Եղիշէ — գոնէ ըստ իմաստին — Ղ. Փարպեցիէն: Նաեւ «Յազկերտ» անունը Ղազարէն ծանօթ է իրեն: Իւր Բ. Դրուագը, ուր վարդանանց պատերազմի անցքերը պիտի պատ-

<sup>2</sup> Հայաստանն միայն իւր անձուկ սահմաններուն մէջ, պիտի տեսնենք ետքը:

<sup>3</sup> Այսպէս: Յայտնապէս աչքի առաջ ունեցած է խմբագիրը հոս Ղ. Փարպեցւոյ սողերը (37). «Ի սկզբան ամին Երկրորդի Յազկերտի որդւոյ Վռամայ», ուր իմաստն է «յառաջին ամի Բ. Յազկերտի» եւն. հմմտ. եւ վերը § 21:

<sup>4</sup> Հմմտ. Nöldeke, Tabari, էջ 423—426:

մագրէր Ղազար, առանց կանխարանութեան կը սկսէր անմիջապէս. «Եւ էր Յազկերտի արքայի հազարապետ մի Միհրնեբուհ անուն...» (էջ 39): Այս յանկարծական սկզբնաւորութիւնը կ'ենթադրէր նախորդ Գրուազին վերջին պարբերութիւնը, ուր տրուած էր ակնարկութիւն թէ՛ արքային անձին եւ թէ՛ ժամանակին վրայ. կ'ըսուի. «Եւ ի բարեխօսութենէ սուրբ հանգուցելոցն աբանց (Սահակայ եւ Մաշտոցի)՝ շնորհեցաւ աշխարհիս Հայոց պաշտօն ուղղափառ հաւատաց, մինչեւ ցամա ժի. Յազկերտի արքային Պարսից որդւոյ Վուամայ» (38). այս ինքն երանելեաց մահէն մինչեւ Յազկերտի ժի. տարին (449) խաղաղութիւն վայելեց Հայաստան: Սահակի մահը պատահած էր «ի սկզբան ամին երկրորդի Յազկերտի որդւոյ Վուամայ թագաւորին Պարսից», այն է 438 (կամ 439<sup>4</sup>) Սեպտ. 8: Արդեամբք ալ առաջին անգամ 449ին սկսան դարբնուիլ Պարսից արքունիքի մէջ խորհուրդներ Հայոց դէմ:

Եղիշէ որչափ ալ Ղազարի հետքերով կ'ընթանայ, բայց նուազ կարեւորութիւն տալով ուղիղ ժամանակագրութեան կը շեղի թէ հոս եւ թէ այլուր Ղազարէն եւ արտաքին աղբիւրներէն: Եւ դարմանք կը պատճառէ ինձ, թէ ինչպէս նախորդ քննիչները<sup>5</sup> առանց անդրադառնալու այս կէտին՝ գերակշիռ համարած են Եղիշէի տեղեկութիւնները համեմատութեամբ Ղազարի, որ ստոյգ եւ խնամեալ ժամանակագրութեան մը վրայ հիմնած է իւր պատմութիւնը: Որովհետեւ Եղիշէ ինք զինքը դէպքերուն ժամանակակից եւ ակնատես կը ներկայացնէ, իսկ Ղազար ի համբաւոյ միայն ծանօթ, այս չի կրնար չսփանիչ ծառայել զնահատելու ճշգիւ հեղինակներու արժէքը:

Որչափ ալ ստոյգ է թէ Եղիշէ յանձին «իշխանին» կամ «արքայից արքային» Յազկերտ Բ. ի դէմքը նկատի ունի, բայց եւ այնպէս այն նկարագիրը, զոր կու տայ պատ-

<sup>4</sup> Յազկերտ Բ. ի դահակալութեան առաջին տարին նշուելի է կը նշանակէ 438 Օգոստոս 4ին սկսող նոր տարին. Վուամի մահուան տարին եւ ամիսը ճշգիւ ծանօթ չէ: Ընդունելով Յազկերտի առաջին տարին 438 Օգոստոս, Հայոց նաւասարդ 30, երբ վախճանեցաւ Սահակ (հմմտ. եւ Կորիւն, 48) պիտի համապատասխանէ 438 Սեպտ. 8: նոյն տարւոյն Մեհականի 13ին վախճանեցաւ նաեւ Մաշտոց, ուստի 439 Փետր. 17ին: Այլապէս հարկ պիտի ըլլայ երանելեաց մահը զնեւ 439/40ին:  
<sup>5</sup> Հմմտ. Nöldeke, Tabari, էջ 423—424 եւ այլուր յաճախ:

մագրէր արքայից արքային, այն պատերազմական գործողութիւնները, զորոնք կը վերագրէ Յազկերտ Բ. ին, եւ վերջապէս այն հալածանքները քրիստոնէից դէմ, որոնց հեղինակը նոյն արքային կը ներկայացուի, հակառակ ճարտասանական ուժեղ արտայայտութիւններու չեն կրնար համոզել զմեզ, թէ Յազկերտ Բ. եղած ըլլայ այն «Նշխանը», որ երեւցուցած է իր վրայ այն նկարագիրը կամ մղած այն ահեղ պատերազմները եւ կամ պատասխանատու եղած յիշուած հալածանքներուն:

Ե. դարը չէր կրնար ասպարէզն եղած ըլլալ այն պատերազմական շարժումներուն. եւ ոչ ալ Յազկերտի անձը բաւական՝ ընդունելու իր վրայ այն ինքնավստահ, գոռ պատերազմող եւ գոռող արքայի դէմքը, որ պիտի կը ներկայանայ ժամանակակից արքային Եղիշէի պատմութեան մէջ:

Նկատենք նախ արքայից արքայի նկարագիրը, այնպէս ինչպէս նկարագրուած է Եղիշէին, ապա համեմատենք Յազկերտ Բ. ի նկարագրին հետ, եւ եթէ տեսնենք անհամապատասխան անոր, որոնք Սասանեան դահին վրայ ուրիշ իշխան մը, որուն աւելի պատշաճէր այն: Եւ եթէ յաջողեցանք գտնել հոն այդ նկարագրին տէրը, փորձենք երեւան բերել անոր մէջ նաեւ պատերազմական շարժումներու գլուխը:

ա. Արքայից արքայի նկարագիրը:

Եղիշէ, որ անձամբ ծանօթ է արքայից արքայի դէմքին, կու տայ մանր գծեր անոր նկարագրին, թէպէտ ցրիւ: Կարելոր է համարել այդ գծերը, ստանալու համար ամբողջական պատկեր մը: Արեւելեան բռնապետի մը բոլոր յատկանիշներն ունի նա իր վրայ.

1. Գոռ պատերազմող. «Իբրեւ զհողմ սաստիկ, զի բախիցէ զծով մեծ, այնպէս շարժէր եւ տատանէր զամենայն բազմութիւն զօրաց իւրոց» (14). «սկսաւ եղջիւր ամեւ անօրէնութեամբ եւ գոռալով հող հանէր ընդ չորս կողմանս երկրի» (7). «նեղեալ տաղնայէր անխաղաղասէր կենօք. քանզի յոյժ սիրելի էր նմա խոռովութիւն, արիւնհեղութիւն» (7). կը նմանցուի «կատաղի գազանի» (7), որ «մերթ շանթէր, գալարէր իբրեւ զօձ թիւնաւոր, մերթ պարգէր զօջէր իբրեւ զառիւծ զայրացեալ, գելոյր, գլորէր, տա-

պալէր երկղիմի մտօք» (14). «զոր եղիւ սաստանայ իւր գործակից եւ զամենայն մթերեալ թոյնան թափեաց ի բաց եւ ելից զնա իբրեւ զպատկանդարան դեղովք» (7). «վասն այնորիկ յանձն իւր տարաբերէր, եթէ յո՛ թափեցից զգառնութիւն թիւնից, կամ ուր բացատրեցից զբազմութիւն նետիցն» (7):

2. «Մարդախոշոշ բռնաւոր» է, «որ եւ ըստ հեթանոսաց օրէնս անցանէր արիւնհեղութեամբ» (15). «վայրենացեալ է սիրտը», արբած «բարձր հպարտութեամբ», «յանդուզն՝ յարձակումը», «մոլեղնոտաբար՝ գոչումը» (63). «լուայ դձայն բարբառոյն յանդգնաբար խօսելով» (14). «որ մեծածայն բարբառով որոտայր, եւ եւս ահապին հրամանօքն զհեռաւորս եւ զմերձաւորս զողացուցանէր» (63):

3. «Եւ այսպէս հպարտացաւ բարձրացաւ ի միտս իւր. ի վեր քան զմարդկային բնութիւնս ընդվզեալ ասպարթանէր. ոչ միայն յիւր մարմնական պատերազմացն, այլ մեծ ոմն զինքն կարծէր քան զբնութիւն հայրենի կարգին. վասն այնորիկ կեղծաւորութեամբ թագուցանէր զինքն ըստ կարծեացն, եւ որպէս երեւէր իմաստնոցն՝ յանմահից իմն կարգի դնէր զինքն: Եւ յոյժ էր ցատուցեալ ընդ անունն Քրիստոսի» (12):

4. «Յեղյեղուկ» է անոր լեզուն, ողորդ. «խորամանկ» է բնութեամբ եւ «խոռվասէր» մտօք (66). «կեղծաւոր» (15). ուր ողորդանօք չի յաջողիր, կ'արտայայտուի «բանիւք սպառնալեօք». «կեղծաւորութեամբ խոնարհեցուցանէր զինքն առ ամենեսեան, խօսելով ընդ նոսա ի պատճառս սիրոյ, զի խորամանկութեամբ որսալ մարթացէ... եւ իբրեւ ետես, եթէ ոչինչ յարգեցաւ ծածուկ հնարագիտութիւնն... յայտնեաց ակամայ զծածուկ խորհուրդն, ետ հրաման բարձր բարբառով...» (15). «նա եւ ոչ գերկրաւոր վաստակս ուրուք յիշէր» (18). «քանի՛ լիբբ է խորամանկ խարէութիւն նորա». «հաւատացո՞ւք անհաստատ հրամանի նորա... զի որ ինքն իւր չար է, այլում բարի ոչ կարէ լինել». «զո՞ր բարեգործութիւն տեսաք (ի նմանէ) առ ամենայն եկեղեցիս, որ են յաշխարհին Պարսից» (66). «խոնարհեցաւ ի բարձր հպարտութենէն... սկսաւ քաղցր եւ աղերս բանիւք խօսել ընդ ամենեսեան եւ ասել. Զի՞նչ ինչ փնաս գործեալ է իմ...» (63):

բ. Յազկերտի Բ.:

Ղազար Փարպեցոյ անձանօթ է Յազկերտ Բ. ի այս նկարագիրը: Ղազարի համաձայն Յազկերտ մին է այն արքաներէն, որոնք առանց իրենք զիրենք ցուցադրելու, առանց սեպհական կամք երեցնելու՝ հետեւող են պարզապէս աւագանւոյն խորհուրդին: Թէպէտ մեծամեծ եւ ծանր հարուածներ կրած էր Հայաստան 450—452 տարիներուն, բայց Ղազար եւ ոչ անգամ մը բացատրութիւն թոյլ տուած է իրեն, որով այն չարիքներուն իբրեւ անմիջական պատճառ Յազկերտ մեղադրուէր: Մինչեւ 449/50 Հայերն եւ Հայաստան ի պատուի էին յաջ Յազկերտի. իւր հրովարտակին մէջ կը գրէր Յազկերտ. «որպէս դուք օգտակար աշխարհ էք եւ մեր սիրելի» (Փարպ. 44): Ղազարի համաձայն Յազկերտ ոչ ինքնարեւոյր, ինչպէս թշնամի քրիստոնէից, այլ միայն «ի չարախորհուրդ եւ ի դժնամիտ հազարապետէն իւրմէ Միհրնեբուհէ» յորդորուած առաջարկած է Հայերուն ընդունիլ զրաղաշտական դինը, այնպէս համոզուած թէ իւր արքայական պարտականութիւնն է հպատակներուն բարին հողալ, այլապէս «ծանր պատուհաս կրելոց եմք յաստուածոցն» (անդ, 43—44): Կը պատմէ Ղազար, թէ Աւարայրի ճակատամարտէն ետքը երբ լսեց Յազկերտ, «զկոտորունն լաւարանց ի գնդէն Պարսից եւ զմահ անն Վարդանայ՝ յահաւոր սուգ ընկըզմեալ խոռվէր, յիշելով զքաջութիւն անն եւ զլաւութիւնն» (73). ուստի ունէր Յազկերտ առաքինութիւնը զնահատելու թշնամւոյն անգամ լաւութիւնը: Նոյն մարդասիրական զգածումները կը տեսնուին իր վրայ նաեւ այն դէպքին, երբ Աշուշայ կը խնդրէ արքային շնորհքը Հմայեակ Մամիկոնեանի որդիներու համար, որոնք իբրեւ պատանդ պահուած էին Տիգրան, եւ կը շնորհուի առնց ազատութիւնը առանց դժուարութեան (106): Եւ վերջապէս թագաւորին միամտութեան ուրիշ գեղեցիկ ապացոյց մը կու տայ Ղազար, երբ կը պատմէ թէ Քուշաններու դէմ մղուած անյաջող պատերազմէն ետքը մտախորհ Յազկերտին մոզքը պարտութեան պատճառը բանակին մէջ գտնուած քրիստոնէայ երէցները ցոյց կու տան. «լուեալ զայս թագաւորն ի մոզուցն, եւ կարծեցեալ ստոյգ գտուտ պատճառս նոցա, եւ ի մեծ սրտմտութիւն զրգոեալ ընդ կապեալ

քահանայան» (87) : Ուստի դարձեալ ուրիշներու սաղրանքներէն ի չարն առաջնորդուած :

Յազկերտի արդարասիրութեան ուրիշ ապացոյց մ'ալ պէտք է համարիլ իր բռնած վարմունքը հանդէպ Վասակին : Անոր ուրացութիւնը, մատնութիւնները թէպէտ նպատեցին Պարսիկներուն նուաճելու հայկական ապստամբութիւնը, բայց արքայից արքայն դատեց զանոնք վատութիւն եւ վնասակար պետական շահերուն . դատապարտուեցաւ մատնիչը :

Այսպէս Յազկերտ Բ. ըստ Ղ. Փարպեցուց : Այս նկարագիրը, զոր կը գծէ Ղազար, ճշգիւ կը համապատասխանէ արարական աղբիւրներու : Յազկերտ Բ. մասին «չատ քիչ բան գիտենք մահմեդական աղբիւրներէ, կը գրէ Շպիգել<sup>6</sup>, բայց մեր ստացած դոյզն տեղեկութիւններն ալ կը բերեն պատիւ իր անուան . արդար էր իւր հպատակներու հանդէպ, բարեացակամ նաեւ նկատմամբ բանակին . այս պատճառաւ ալ յորջորջուեցաւ բարեմոյն» : Յազկերտի կեանքէն հետաքրքրական մանրամասնութիւններ կը հաղորդէ Կարխայի նահատակներու պատմութեան ասորի անձանօթ հեղինակը<sup>7</sup> . «Յազկերտ Պարսկաստանի թագաւորը, Շապուհի հինգերորդ յաջորդն էր . ինչպէս Շապուհ, նաեւ ասիկա հանեց Աստուծոյ եկեղեցւոյ դէմ հալածանք : Թէպէտ եւ իւր թագաւորութեան առաջին եօթը տարիներուն բարեանուն հռչակուած էր, բայց ութերորդ տարւոյն սպաննեց իւր զուտը, որ միանգամայն իր կիներն եղած էր<sup>8</sup> . սպաննեց նաեւ երկրին մեծամեծները : ... Սովորութիւն էր, որ ամէն ամսոյն առաջին օրէն սկսեալ շաբաթ մը բովանդակ, կու գային կը ներկայանային Պարսից թագաւորին իր պաշտօնեա-

<sup>6</sup> Fr. Spiegel, Eranische Altertumskunde. Bd. III. Leipzig 1878, էջ 356. հմտ. եւ Nöldeke, Tabari, էջ 113—114 :

<sup>7</sup> G. Hoffmann, Auszüge aus syrischen Akten persischer Märtyrer. Leipzig 1880, էջ 50—51. հմտ. եւ Nöldeke, անդ, 113, ծան. 2 :

<sup>8</sup> Թէ ասորի հեղինակիս տեղեկութիւնները նկատմամբ Յազկերտի դատեր եւ կնոջ սպանութեան ո՛րչափ ստոյգ են, դժուար է ըսել . յամենայն դէպս զերին չէր դուրսի աշխարհին ճշգիւ խելամուտ ըլլալ, թէ ինչ կը կատարուէր արքունի պալատան խորքը : Որովհետեւ Վասակ Բ. Յազկերտի հայրը շատ երեսասարական հասակին գահ բարձրացած էր, Յազկերտ իւր Բ. տարւոյն հազիւ 30ամեայ կարող էր ըլլալ . ուստի իր ամուսնութիւնը դատեր հետ պէտք է անոր մատուց հասակին պատահած ըլլայ, կը գրէ Nöldeke, անդ, 114, ծ. 1 : — Աւագանայն կոտորածը անսովոր բան մը չէր Մասանեան արքայից համար :

ները եւ կը դնէին անոր առջեւ զանգատներ դործաւարներու մասին, եթէ անոնք օրէնքի դէմ որ եւ է կէտի մէջ անիրաւ գտնուած էին : Այս սովորութիւնը վերցուց այս վատչուէրը» : Կ'երեւայ թէ այս սովորութենէն կ'օգտուէին քրիստոնեաները : Տարարի, որ ունի ակնարկութիւն մ'այս մասին, կ'աւելցնէ թէ թագաւորին դիտաւորութիւնն էր աւելի ազատ խորհիլ պետութեան բարւոյն մասին եւ հնարքներ գտնել խորտակելու թշնամիները : Այս թշնամիները անշուշտ կը գտնուէին յատկապէս հեռուոր Վրկանի մէջ, ուր մղուած պատերազմներու մասին կը խօսի նաեւ ասորին : Այս կէտին, ինչպէս նաեւ քրիստոնէից հանդէպ բռնած իր քաղաքականութեան մասին պիտի խօսինք յետոյ :

Յազկերտ Բ. ի նկարագրի մասին այս ծանօթութիւնները՝ հաւաքուած հայ, ասորի եւ արաբ աղբիւրներէ, հեռուէն անգամ չեն համապատասխաներ այն նկարագրին, զոր կը գծէ Եղիշէ . եւ ակամայ կը ծագի կասկած թէ Եղիշէ ուրիշ «Իշխան» մը չունի՞ աչքի առաջ քան Յազկերտ Բ. :

գ. Խոսքով Ա. :

Նկարագիրը, զոր կու տայ Եղիշէ «Յազկերտի» անուան տակ, նկարագիրն է Խոսքով Ա. ի, Կաւատի որդւոյն<sup>9</sup>, որ բարձրացաւ դահ 531ին եւ իւր թագաւորութեան 48 տարիներուն եղաւ Մասանեան տան հզօրագոյն զէմքը, յիշեցնող հին արքեմենեան հարստութեան անուանի արքաները : Սարսեցան անոր անուան առջեւ սահմանակից աշխարհները, եւ հոռոմէական օգոստափառ կայսրութիւնը ասարեկեցաւ ի տես անոր բանակին : Մասանեան պետութիւնը ապրեցաւ վերջին անգամ իւր բարձրութիւնն անոր տիրապետութեան օրերուն : Խոսքով վայելեց իւր համբաւը նաեւ արարական աշխարհին մէջ եւ դարձաւ արեւելեան զրոյցներու իմաստուն եւ անմահ Նուշիրվանը :

Առանց աչքի առաջ ունենալու Խոսքովի հօր զէմքը, ահարկու ձայնը, աշխարհադրող ոգին, քաղաքագէտ եւ տնտեսագէտ միտքը, ուղղապէս անձը, աշխարհաչէն եւ

<sup>9</sup> Խոսքովի նկարագրի մասին խօսած են F. Spiegel, III, 461—463. Nöldeke, Tabari, էջ 160—163, ծան. 3. F. Justi, Geschichte des alten Persiens, Berlin 1879, էջ 207—234. Կ. Գիւտերբը, Բիւզանդիոն եւ Պարսկաստան. գերմ. թարգմ. Հ. Հ. Համբարեան : Վիեննա 1911, էջ 53—55 եւ այլուր յաճախ : Կ'օգտուինք առաւելապէս վերջինէս :

աշխարհակործան մարդը, անհնար է ըմբռնել Եղիշէն, թափանցել անոր խօսքերու իմաստին եւ վերահասու ըլլալ սրբաբանութիւններուն :

Թշնամւոյն յաղթանդամութիւնը եւ մեծութիւնը պիտի բարձրացնէ փառքը մրցակցին, որ ոսոխ կը կանգնի եւ ապաստան իւր ուժին կը խիղախի զգետնել իւր ընդդիմադիրը : Ըմբռնածարտ նահատակները Խոսքով եւ Եղիշէ են :

Մասնօթանալով Խոսքովի նկարագրին պիտի տեսնենք թէ որչափ ապիկար եւ անճաշակ եղած է իմբադիրը, երբ դաճած Յազկերտը հսկային հանդերձներով փորձած է հրապարակ իջեցնել :

Խոսքովի նկատմամբ երկու հակառակ կողմերէ կը քաղենք մեր տեղեկութիւնները :

Պարսիկ եւ արաբ աղբիւրները, ինչպէս Ֆիրդուսի, Տարարի եւն իւր մէջ կը նկատեն ժողովուրդը երջանկացնող իշխանի մը գաղափարականը, իւր արդարութիւնը, քաջութիւնը եւ պատերազմի բախտը կը փառաբանեն, իւր կառավարութիւնը կը պանծացուի իրր ամենաերջանկաւէտ ժամանակը, զոր Իրան եւ իւր ժողովուրդը վայելած է : Այսպէս նաեւ Սերիոս, էջ 28 «էր խաղաղասէր եւ աշխարհաչէն», «հայր էի ամենայն երկրի եւ ոչ տէր . եւ սնուցեալ զամենասեան իբրեւ (դ)որդի եւ սիրելի» (հմտ. եւ Տարարի, էջ 276/7. Խոսքով Բ. սովոր էր ըսել իւր ժողովուրդեան . «Մեր պապը՝ Խոսքով, Կաւատի որդին, Ձեզի հօր մը պէս էր») :

Ուրիշ է Բիւզանդացւոց վճիռը : Ասոնց նայելով՝ Խոսքով ամենասոսկալի եւ անհաշտ թշնամին է իրենց, որմէ ամէն չարիք կարելի է սպասել ու հետը անհնարին է տեւական խաղաղութիւն հաստատել : Մասնաւորաբար Պրոկոպիոս ամենախիստ վճիռը կ'արձակէ անոր դէմ . զանիկա կը նկարագրէ իբր կեղծաւոր, անազորոյն, արծաթասէր, ատակ ստութեան, երզմնադրժութեան եւ նոյն իսկ ամէն ամօթալի դործողութեանց . իւր ձեռք բերած յաջողութիւնները ըստ ինքեան ոչ թէ իւր քաջութեան, այլ յարավուրիս բախտին պարտական է<sup>10</sup> :

<sup>10</sup> «Խոսքով, Կաւատի որդին, անխաղաղասէր էր րնաւորութեամբ եւ անչափ տենչացող նորանոր ձեռնարկութիւններու . այս պատճառաւ ալ միշտ առկուցուն էր իր կեանքը խոռվարարութեամբ եւ արմուկներով . ոչ միայն ինք զինքը, այլ եւ զամէնքը կը խռովէր : Այս եղաւ պատճառը, որ խորհուն պարսիկները անհանդուրժելի տեսան իր կառավարու-

Ազաթիաս<sup>11</sup> այնչափ միակողմանի եւ նախապաշարեալ չի խօսիր . գոնէ Խոսքովի մեծամեծ յաջողութիւնները կը խոստովանի, որոնցմով Պարսից նախնի եւ նորագոյն թագաւորներուն մէջ ամենահզօրն ու ամենամեծը հանդիսացաւ :

«Իրօք Պրոկոպի ստգտանաց մէկ բաւական մասը հիմ կրնայ ունենալ, որոնց վրայ աւելցնելու է ամբարտաւանութիւնը եւ ինքնապարծ յանձնապատասխանութիւնը . բայց նկարագրի հայոց դարովուած պակասութիւններէն շատերը արեւելեան բռնապետի մը նախատիպ պատկերը կը ստուերագծեն եւ պարսկական ազգային նկարագրին կը համապատասխանեն : Այսու հանդերձ նշանաւոր իշխող ու Սասանեան հարստութեան ամենահոյակապ թագաւորն էր : Գիտցաւ արեւմտեան մտաւոր մշակութեան արժէքը զնահատել : Եթէ նոյն իսկ առասպել ըլլայ յունական փիլիսոփայութեան մէջ խորամուխ ըլլալը, բայց իրողութիւն է, որ հռոմէական պետութենէն վտարուած Նոր-պղատոնականաց ապաւէն ըրաւ Տիւրքոնը եւ ջերմապէս բարեխօս եղաւ Յուստինիանոսի, որ անվնաս ետ դառնալ կարենան իրենց հայրենիքը» (Գիւտերբը, էջ 53/55) :

Եղիշէի տուած նկարագրականին մէջ ուշադրութեան արժանի են մասնաւորապէս այն տողերը, ուր կ'ըսուի, թէ արքայից արքայն իւր յաղթութիւններէն «հպարտացաւ բարձրացաւ ի միտս իւր, ի վեր քան գմարդկային բնութիւնս ընդվզեալ ապարքանէր, ոչ միայն յիրս մարմնական պատերազմացն, այլ մեծ ումն գինգն կարծէր քան գրնութիւն կայրեմի կարգին<sup>12</sup> . վասն այնորիկ կեղծաւոր-

թիւնը եւ խորհեցան անոր գահին վրայ ուրիշ թագաւոր մը դնել Կաւատի տնէն» : Բայց Խոսքով կանխեց ի դերեւ հանել իրեն դէմ նիւթուած դաւադրութիւնը, ոչ միայն անձիսեց իր կըրպրները, այլ եւ շատ մեծամեծներ կոտորեց, անոնց թուին մէջ Աստուհասպետն եւ Մերոգէսը, որոնք այնչափ արդիւնաւոր եղած էին իրեն հօրը նաեւ իր օրով . Պրոկոպ. վասն Պարսի. Պատմ. Ա. 23 : Այլուր (Բ. 9) քննադատելով Խոսքովի անարդար ընթացքը կը գրէ Պրոկոպիոս . Կը սիրէր չեղածն իբր եղած ներկայացնել եւ ճշմարտութիւնը սքողել, իր բրած անօրէնութեանց պատճառ թշուառները ցոյց տալ . ինչ որ յանձն կ'առնէր խոստմամբ եւ կը հաւատարմացնէր երդմամբ, քանի մ'օր ետքը կ'ուրանար եւ չգիտնալ կը ձեւացնէր . առ սէր դրամին ամէն ոճիր թոյլ կու տար անձին . առ երեսս կը կերպարանէր քաջ աստուածապաշտ եւ լեզուով կը չքմեղէր գործած անօրէնութիւնները, եւն : Կը գրէ դարձեալ Պրոկոպ, թէ «բնաւորութեամբ շատ չար էր» Խոսքով (Anect. 119) :

<sup>11</sup> Ազաթիաս Գ. 29 : «արաբ իրս բաղունս եւ մեծամեծս յոյժ, եւ անցոյց զանցոյց զամենեքումբը որ յառաջ քան զնա թագաւորեցին ի վերայ Պարսից» :

<sup>12</sup> Մենանդըր, Հատակոտոր 11 (էջ 353; ապ.

րութեամբ թագուցանէր զինքն ըստ կարծեացն, եւ որպէս երեւէր իմաստնոցն՝ յանմահից իմն կարգի դնէր զինքն: Թէպէտ արագաստաւորուած են պատմագրին տողերը հոս, բայց ինչպէս ինձ կը թուի, ըսել կ'ուզէ թէ թագաւորը ինչպէս գերմարդկային մը կը յոխորտար, եւ թէեւ առ արտաքս չէր արտայայտէր իւր զգածունները բայց կը տեսնէին իմաստունները իր մէջ թագուն մտքեր, թէ «յանմահից իմն կարգի դնէր զինքն»: Եղիշէ նկարագրական գիծ մը կու տայ հոս արքայից արքայի դէմքէն, թէպէտ բառախաղով, բայց բնորոշիչ. անիմաստ հակադրութիւն մը չէ անշուշտ իր գրչին տակ «կեղծաւորութեամբ թագուցանէր զինքն ըստ կարծեաց — որպէս երեւէր իմաստնոց»:

Երեւան բերելով յանձին արքայից արքայի՝ Սոսրով Անուշրուանի դէմքը, պիտի դարնէ անմիջապէս աչքի «Անուշրուան» յորջորջանքի իմաստը, որ իւր բառական թարգմանութեամբ «անմահ ոգի» նշանակութիւնը կը ստանայ: Անշուշտ ուսմիկ ժողովուրդը չէր կրնար դիւրաւ վերահասու ըլլալ բառին պահապան կազմութեան եւ նշանակութեան, բայց «իմաստնոց» համար չէր կրնար գաղտնիք մնալ թէ յորջորջանքս Անուշրուան կից Սոսրով անուան «ԱՆՄԱ-ՀԱԿԱՆ» կը նշանակէ, որով «յԱՆՄԱՀԻՑ իմն կարգի դնէր զինքն»:

Այսպէս Անուշրուան կոչուած է Սոսրով իւր ծննդեան օրը (Տարարի 136). ըստ այլոց այս յորջորջանքը արուած է իրեն երբ կոտորեց Մաղապիկանները (Nöldeke, Tab., 467): Անուան հնագոյն՝ պահապան ձեւն է Anōšak rawān «անմահ հոգի». Āfrīne panjīh մէջ կը գրուի anošeh rawān (Justi, Iranisches Namenbuch, 17): Սերիոս (26) կը տատաղարձէ Անուշրուան. իսկ արաբացիք Anōšarwan, Ֆիրդուսի Noširwan, այսպէս նաեւ անագան շրջանի հեղինակներու քով (հմմտ. «Սրատք ի բանից Նօշրուան թագաւորի» ի ձեռագիրս). աւելին՝ Nöldeke, էջ 136, ծ. 2, Justi, անդ, 17, H. Hübschmann, Ar-

Բոննի) յառաջ կը բերէ Սոսրովի առ Յուստինիանոս 562ի թղթէն հետեւեալ սկզբնաւորութիւնը. «աստուածեղէն, առաքինի, խաղաղասէր իշխան Սոսրով, արքայ արքայից, երանելի, բարեպաշտօն, բարեբարորում գիբ շնորհեալ են բախտ մեծ եւ թագաւորութիւն մեծ, սկայ սկայից եւ ի բնութեմէ աստուածոց (Յ՛՛ է՛՛ Յ՛՛՛՛ Յ՛՛՛՛ շօճճճճճճճճ) Յուստինիանու կայսեր եղբոր մերում» ինչպէ. հմմտ. Գիւտերբոք, անդ, էջ 11:

menische Grammatik, էջ 20: Անագան շրջանի Պարսերը anošak rawan կը գործածեն «երանելի» իմաստով վախճանեալներու համար: — Սոսրովի որդիներէն մին՝ քրիստոնէայ մօրմէ ծնած՝ կոչուած է Անուշագատ (Anōšazādh, պահ. Anōšakgāt «յանմահէ ծնեալ», «անմահածին», հմմտ. Nöldeke, 467, ծ. 3. Justi, 17—18): — Anōšak բառն ունինք նաեւ հայերէնի մէջ փոխառութեամբ պահապանէն նշանակ «անմահական» եւ անուշգ «անմահութիւն», «արքայութիւն», զնդ. aōša «մահ» արմատէն. հմմտ. Հ. Աճառեան, Արմատական Բառարան, Ա, էջ 363—364: — Հաւանօրէն նոյն Անուշարուան անունէն ծագած է (առ Մ. Սորենացոյ, Ա. 20) ր գրի անկմամբ «Անուշաւանն Սօսանուէր», Արայի որդին, «ամենահարուստ եւ շատահանձար յիւր եւ ի բան»: Այսպէս ըմբռնուած էր նաեւ Սոսրով Ա. աւանդութեան մէջ:

24. ՅԱԳԿԵՐՏ Բ. = ԽՈՍՐՈՎ Ա. ԱՆՈՒՇԻՐՈՒԱՆ

Բ. Հոովմէական պատերազմը:

Պատերազմական ձեռնարկութիւնները Հոովմայեցոց դէմ, որոնք Յաղկերա Բ. ի կը վերագրուին Եղիշէն եւ գտած են արժանահաւատութիւն հին եւ նոր հեղինակներու քով, բոլորովին անձանօթ են ինչպէս Ղազար Փարպեցոյ եւ Կարթայի վկաներու ասորի վկայագրին, նոյնպէս Բիւզանդական պատմիչներուն: Միայն Տարարին է, որ թեթեւակնարկութիւն մ'ունի այս մասին:

Որովհետեւ այս պատերազմները նորագոյն պատմիչներէ նկատուած են պատմական եւ զրուած են տեղ բիւզանդական եւ արեւելեան պատմութեան մէջ, անհրաժեշտ կը համարիմ մանր քննութեան ենթարկել այն տեղիքները հայ եւ օտար աղբիւրներու քով, որոնք հիմ ծառայած են նախորդ քննիչներու հասնելու այնպիսի համոզումի:

Կը գրէ Եղիշէ (Ա. 7—8). «Եւ առ յոյժ յիմարութեան իբրեւ զգազան մի կատաղի յարձակեցաւ ի վերայ աշխարհին Յունաց. Եհար մինչ ի քաղաքն Մծրին. եւ բազում գաւառս Հոռոմոց աւերեաց ասպատակաւ. եւ զամենայն եկեղեցիս հրձիգ արար. կուտեաց զաւար եւ զգերի. եւ ահարեկ արար զամենայն զօրս աշխարհին: Իսկ երանելին Թէոդոս կայսր, քանզի խաղաղասէր էր ի Քրիստոս, ոչ կամեցաւ ելանել ընդ առաջ պատերազմաւ. այլ այր մի Անատոլ անուն,

որ էր նորա սպարապետ արեւելից, առաքեաց առ նա բազում դանձիւք: Եւ արք պարսիկք, որք վախուցեալ էին վասն քրիստոնէութեան, եւ էին ի քաղաքին Կայսեր, կալաւ եւ ետ ի ձեռս նորա: Եւ զամենայն զօր ինչ ասաց ի ժամանակին՝ կատարեաց ըստ կամաց նորա, եւ արգել զնա ի բազում բարկութենէն. եւ զարձաւ անդրէն յիւր քաղաքն Տիղրոն» (7—8):

Նկարագրուած արշաւանքները, ասպատակութիւնները, գերեվարութիւնները, «բազում գաւառաց» աւերումները անշուշտ հոռատորական աստիճաններ չեն. եւ ոչ ալ յաջորդող ծանականաց դաշինքը — «զօր ինչ ասաց ի ժամանակին (արքայից արքայն)՝ կատարեաց (Կայսրն) ըստ կամաց նորա» ի սէր խաղաղութեան — աւելաբանութիւն կամ ուռուցիկ խօսքեր: Պատերազմ մը, որ «ահարեկ արար զամենայն զօրս աշխարհին» Յունաց, անշուշտ առանց արիւնհեղութեան չէր, եւ սարսափը հասած էր մինչեւ մայրաքաղաք. հետեւաբար չի կրնար մտածուիլ թէ Բիւզանդական պատմագիրներուն անձանօթ մնացած ըլլար եւ կամ անոր հարուածները Միջագետքի քրիստոնէից վրայ արձագանդ գտած չըլլային ասորի հեղինակներու քով: Եւ որովհետեւ կը լռեն Բիւզանդականք եւ չեն արձագանգեր ասորիք այս պատերազմական շարժումներու մասին, կ'արթնայ մեր մէջ լուրջ կասկած Եղիշէի արժանահաւատութեան վրայ:

Այս կասկածը փարատելու համար անգոր է Մ. Սորենացոյ տեղիքը (Գ. 67), ուր կը գրէ հայ Հերոդոտը. «Ջքսան եւ զմի ամ<sup>13</sup> թագաւորեալ Պարսից Վոամ երկրորդ<sup>14</sup> մեռանի, թողով զսէրութիւնն որդոց իւրում Յաղկերտի: Որոյ մոռացեալ գիւշտութիւնն իսկ եւ իսկ ընդ քաղաքերն զիմէ ի վերայ գորացն Յունաց, որք առ Մծրին, հրամայելով զնդին Ատրպատականի ի մեր աշխարհս ելանել. որք եկեալ անարգապէս բանակեցան հուպ առ Բազնացն աւանի»:

Մծրինի յիշատակութիւնը ցոյց կու տայ, թէ Մովսէս ծանօթ է Եղիշէի տողերուն:

Աւելի ծանրակշիռ է Տարարիի վկայութիւնը (Nöldeke, Tab., 116), որ այսպէս կը գրէ.

«Հոովմայեցիք յասպաղեցին վճարել Յաղ-

<sup>13</sup> Իմա՛ Վոամ Ե. :  
<sup>14</sup> Իմա՛ զամս ԻԸ. Nöldeke, 423:

կերտին, Վոամի որդոյն, այն տուրքը, զոր սողոր էին անոնք տալ իւր հօրը. այն առեն ուղարկեց Յաղկերտ զՄիհր-Ներսէս, Բուրաղայի որդին, նոյնպիսի բանակով, ինչպէս երբեմն զրկած էր զինքը Վոամ<sup>15</sup>, եւ ասիկա ի գլուխ հանեց թագաւորին կամքը»: Նէօլդեկէ համեմատութեան աննելով Տարարիի այս տեղոյն հետ Եղիշէի, մասամբ նաեւ Մ. Սորենացոյ վերոյիշեալ տեղիքները, կ'ուզէ պատմական գիծ մը տեսնել Տարարիի տողերուն մէջ եւ անոնց համեմատ իմանալ Պրոկոպիոսի տեղեկութիւնները Պարսիկ-հոովմէական կռուի մը մասին:

Պրոկոպիոսի<sup>16</sup> խօսքերն են.

«Թէոդոսիոս յերիտասարդական տին էր, յորժամ վախճանեալ Յաղկերտի (Ա.) հիւանդութեամբ, Վոամ (Ե.) թագաւորն Պարսից անհամար բանակաւ արշաւանս ի սահմանս Հոովմայեցոց եղ. բայց առանց ինչ գործ գործելոյ զարձեալ զնայ յետս ի տեղի իւր: Եւ եղեւ այս այսպէս. Անատոլիոս զօրավար զօրացն յԱրեւելս, ուրում Կայսրն Թէոդոս հրամայեալ էր միայնակ առանձինն գնալ հրեշտակութեամբ առ Պարսիկս, իբրեւ ի բանակն նոցա մերձ եղեւ, էջ յերկարէն եւ զնայ հետիոտս ինքն առանձինն առ Վոամ: Սա իբրեւ ետես զայրն, եհարց զօրս մերձն կային, եթէ ով ոք իցէ, որ այսպէսն խաղայր զայր յառաջ: Յայնժամ ասացին եթէ զօրավարն Հոռոմոց իցէ: Հարկալ յոյժ յանչափ մեծարանաց աստի՛ դարձոյց թագաւորն զերկարն յետս, ընդ նմա եւ համօրէն արք պարսիկք: Եւ իբրեւ եհաս յերկիր իւր, առաքեաց բազում մարդասիրութեամբ պատգաւաւորութիւն եւ շնորհեաց ետ Անատոլեաց զխաղաղութիւնն այնու պայմանաւ, որպէս ինքզնիքն. այս ինքն զի ոչ ոք յերկուց ազգաց անտի ունիցի իրաւունս կառուցանել նորոգ ինչ ամբուրթիւնս մերձ ի սահմանս: Եւ իբրեւ ի գլուխ ել այս, յերկոսին պետութիւնս առին միւսանգամ իրք զխաղաղ ընթացան»:

Պրոկոպիոսի խօսքերը յայտնապէս 421|2ի արշաւանքի մասին են, զոր մղեց Վոամ Ե. Հոովմայեցոց դէմ, եւ որ թէեւ ոչ առանց արիւնհեղութեան, բայց վերջապա կարճ ժամանակի մէջ: Այս պատերազմի մասին իմացած են Պրոկոպիոսի տողերը հիներէն

<sup>15</sup> Հմմտ. Տարարի, 108, ուր բանակին զօրաց թիւը կը նշանակուի 40.000:  
<sup>16</sup> Վասն Պարսիկ. Պատերազմին, Ա. 2:

Ազաթիաս (Գ. 27) եւ Թէոփանէս Խոստովանող, իսկ նորերէն Բարոնիոս, Շպիլդէլ եւ այլք: Որքան ինձ ծանօթ է՝ առաջին անգամ Tillemont եւ իրեն հետեւելով Le Beau<sup>17</sup> Պրոկոպիոսի «Վռամբ» համարած են «Յագրկերտ Բ.» եւ պատերազմը դետեղած 441ին:

Նէօլդեկէ (էջ 116 ծ.) նկատելով թէ նաեւ Նիլիէ Կայսեր կողմանէ զԱնատոլիոս կը հանէ Յագրկերտի առջեւ հաշտարար, կը հետեւցնէ թէ «ուրեմն այս ապահովագէտ այն խաղաղութիւնն է, զոր ըստ Պրոկոպեայ՝ Անատոլիոս, Արեւելից սպարապետը, կը կնքէ արքայից արքայի հետ, պատերազմը սկսելէն յառաջ: Պրոկոպիոս այս խաղաղութիւնը, պարզապէս սխալելով, Վռամ Գորի օրով տեղի ունեցած կը համարի»: Բայց Նէօլդեկէ նկատի չէ առած որ Նիլիէի համաձայն կոչուները ծանր հետեւութիւններ ունեցած են: Նոյն իսկ եթէ համաձայնինք որ Պրոկոպիոսի յիշատակած դէպքը նոյն ըլլայ Տարարիի ակնարկած արշաւանքի հետ, եւ հրատարակուած պատերազմը խաղաղած ըլլայ անարիւն, չենք կրնար նոյնին հետ միաբանել Նիլիէն, որ արիւնհեղութիւններու մասին կը խօսի:

Նէօլդեկէ շարունակելով իւր խօսքերը կը գրէ. «Այս կողմին իբրեւ մէկ դէպքը կը համարի Tillemont Թէոփոբեոսի (Պատմ. Եկեղ. Ե. 37) յիշատակածը. եւ յեցած Մարկեղղիոսի վրայ, որ նոյնպէս կը յիշէ Անատոլիոսի անունը, կը դնէ 441ին (Ինդիկտ. Թ.)<sup>18</sup>»:

Այն տեղ յիշուած Պարսից, Սարակինոսաց եւն յարձակումն Հոռոմայեցոց սահմանները թերեւս կապ ունենայ, կը գրէ Nöldeke, Իսահակ Անտիօքացոյ, ասորի հեղինակին (Պատմ. Եկեղ. հրտ. Bickel, I. 206) պատմած մէկ դիպուածին հետ. որուն համեմատ Արարները, որոնք Պարսից կողմին էին, յարձակում մը գործեցին եւ աւերեցին Մծբնի քովերը, ուստի սահմանին ծայրը դտնուած հոռոմէական Բեթ-Հուր քաղաքը:

Թէոփոբեոսի ակնարկութիւնը այս կողմի վրայ այնպէս մութ է որ դժուար է անոր վրայ յեցած լուսարանել այս պատմական

անցքը. Թէոփոբեոս չի յիշեր Յագրկերտի անունը. աւելի հաւանական է կարծել թէ իր խօսքերը Վռամի օրով տեղի ունեցած միջադէպի մը մասին են, ինչպէս արքային անունն յիշատակութիւնն ալ կը վկայէ: Իսկ Մարկեղղիոսն էլ ի մէջ բերուած տեղիքը ոչ թէ արքայից արքայի ծրագրած յարձակման մը մասին է, այլ բարբարոս ազգերու սովորական ասպատակութիւն մը կը յիշեցնէ, որ չի կրնար նոյնանալ ոչ Նիլիէի, ոչ Տարարիի եւ ոչ ալ Պրոկոպիոսի արշաւանքին հետ, որուն գլուխն է կամ արքայից արքայն անձամբ եւ կամ իր հօր հաղարապետը:

Տարարիի քով ցանցառ չեն այն դէպքերը, ուր պատերազմական դիպուածները վերագրուած են սխալ դերակատարներու: Այդ տեղ կամ Վռամ Ե. ի օրով մղուած պատերազմը կ'ակնարկուի եւ կամ ապա Պերոզի կամ Կաւատի ժամանակ ծրագրուած պատերազմական ձեռնարկութիւնները:

Կարելի չէ մտածել, թէ թագաւոր մը որ աշխարհի չորս կողմերը կը յուզէ իւր պատերազմական ձեռնարկութիւններով, արշաւանքներով կ'ասպատակէ հոռոմէական հողեր, կը սասանեցնէ կայսեր դժբ եւ ամբողջ պետութիւն մը իւր կամքին առջեւ կը խոնարհեցնէ, առանց յիշատակութեան մնացած ըլլայ բիւզանդական պատմութեան մէջ:

438—457 տարիները խաղաղութեամբ սահեցան անցան. առանց պատերազմական ազմուկի պարսկահոռոմէական սահմանի վրայ: Այս խաղաղութեան տարիները կ'ակնարկեն Ղ. Փարպեցոյ տողերը (էջ 74). որուն համաձայն 450ին երբ Հայերը Թէոփոբեոսն եւ անոր յաջորդ Մարկիանոսն զինուորական օգնութիւն խնդրեցին Պարսից դէմ, Մարկիանոս փութաց առ այս իւր խորհրդականներու կարծիքն հարցնել. «Պատասխանի տուեալ Անատոլիոս, որ ի ժամուն ասպարապետ էր Անտիօքայ, եւ Փղորենտի ուրումն առն՝ ասորի ազգաւ, որ էր աւագ դրանն թագաւորին, եւ ասն. Մեզ ոչ թուի հաճոյ արհամարհել զուխտ եւ զհաստատութիւն, զոր ի բազում ժամանակաց գրեալ եւ կնիքալ է առաջին քաղաւորացն, եւ գրգռել պատերազմաւ իրս մի խաղաղացեալս, եւ ի բաց հանել զաշխարհ մի ի ծառայութենէ թագաւորին իւրեանց: Այլ եւ զելս անյայտ իրաց պարս է ածել զմտաւ, զոր ոչ ոք կարէ գիտել, թէ որպէս, զիւրեան՝ եւ կամ

<sup>17</sup> Histoire du Bas-Empire, t. VII (Paris 1764), էջ 162—164:  
<sup>18</sup> Marcellinus Comes իւր ժամանակագրութեան մէջ յամն 441 (Ինդիկտ. X) կը նշանակէ. Persae, Sarraceni, Zanni, Isauri, Hunni finibus suis egressi Romanorum sola vastarunt. Missi sunt contra hos Anatolius et Asper magistri millitiae, pacemque cum eis unius anni fecerunt.

սաստիկ պղտորմամբ պատերազմը եղեալ վճարեցիք»:

Ուստի «ի բազում ժամանակաց գրեալ եւ կնքեալ» խաղաղութիւնը գոյութիւն ունէր դեռ, զոր չեն ուզեր հոռոմայեցիք — նպատակը դէպքին իսկ — եղծանել: Նոյնը կը վկայէ նաեւ ասորին անուղղակի, երբ Կարկայի վկաներու պատմութեան մէջ կը գրէ, թէ մինչեւ Յագրկերտի Ը. տարին խաղաղութիւն վայելած է Միջագետք (տես § 23): Եւ սակայն ճիշդ այս խաղաղութեան ութը տարիներուն տեղի կ'ունենան ըստ Նիլիէի Հոռոմայեցոց դէմ արիւնահեղ կռիւները Միջագետքի մէջ, յատկապէս 438—441 շրջանին:

Նիլիէ նաեւ այս խաղաղութեան դաշինքին անձանօթ մնացած է. եւ Փարպեցոյ տողերուն միտքը առանց հասկնալու, նոր խաղաղութեան դաշինք մը կնքել տուած է:

Նիլիէի խօսքերն են. «Եւ թագաւորէ փոխանակ նորա (Թէոփոբի ֆոքու † 450 Յուլիս 2) Մարկիանոս կայսր, եւ ի ձեռն վառքար արանց խրատուացն իւրոց ծառայիցն, Անատոլիոս՝ որ սպարապետն էր, եւ Եփրատի ասորի, երկուքեան անարգք եւ վառքար արանց, միանգամայն եւ անատուածք. ի նոցա բանս ելեալ թագաւորն, ոչ կամէր անսալ միաբան ուխտին հաւատոց, որ ամենայն ուժովս իւրեանց ընդդէմ կացեալ էին չարութեանն հեթանոսաց: Իսկ անարիս այս (Մարկիանոս) լաւ համարէր պահել զուխտն հեթանոսաց վասն մարմնական խաղաղութեան, քան պատերազմակից լինել ուխտին քրիստոնէութեան: Վասն այսորիկ փութացաւ արձակեաց դեսպանս առ քաղաւորն Պարսից գնոյն Եփրատիս, եւ եմուտ ընդ նմա յուխտ հաստատութեան՝ ձեռնարկի լինել ի գորացն Հայոց զօրու եւ զինու եւ ամենայն օգնականութեամբ» (Գ. 56):

Անատոլիոսի եւ Փղորենտիոսի հասցէին այս անարգական խօսքերը, որոնց մասնակից է նաեւ Մարկիանոս, իրենց ծագումն ունին կրօնական-դաւանաբանական հակառակութեան զգաճումներէ, որոնք բունած են խմբագրիչին սրտին մէջ եւ այս դէպքին գտած են առիթ արտայայտուելու: Խմբագրիչը հակաբողոքական մըն է եւ լաւ տեղեակ 448—451 տարիներու եկեղեցական պատմութեան:

448ին Փղորենտիոս (Փլարենտիոս, Նիլիէի քով աղաւաղուած Եփրատիոս) նշանակուած էր Թէոփոս կայսեր կողմէն ներկայացուցիչ Կ. Պոլիս ընդդէմ Եւտիքի գումարուած ժողովին մէջ: Իր դիրքը հանդէպ Եւտիքիսի երկերես էր. չէր ուզեր որ դատապարտուէր Եւտիքիս. բայց եւ չէր ուզեր որ արդարանար աղանդապետը իւր վարդապետութեան մէջ<sup>19</sup>: Իսկ Անատոլիոս նշանակուած էր Մարկիանոսի կողմէն պատգամաւոր Բաղկեդոնի ժողովին մէջ:

Փղորենտիոս փառաւոր անցեալ մ'ունէր իւր ետեւ. եղած էր սպարապետ, հիւպատ (429) եւ պատրիկ: 435—438 տարիներուն դտնուած էր արեւելք իբրեւ Praefectus Praetorio (Cod. Theod., t. VI, p. 320. ed. Gothof. հմմտ. Адонцъ, Васакъ, էջ 0124): 450ին, երբ հայ պատգամաւորները կը հասնէին Կ. Պոլիս, հոն կը դտնուէր Փղորենտիոս Անատոլիոսի հետ: Նա մին էր այն բարձր պաշտօնեաներէն, որոնց դիմած էր Թէոփոբեոս խնդրելու կայսեր շնորհքը (Թէոփոբեոս. Թղ. 89): Թէ Փղորենտիոս 450ին իբրեւ «դեսպան» ուղարկուած է Պարսից արքունիքը, միւսանգան «յուխտ հաստատութեան» մտնելու արքայից արքայի հետ Հայաստանի մասին, անձանօթ է պատմութեան: Ինչպէս կ'երեւայ, Նիլիէ նաեւ հոս 556—561 տարիներուն երկու պետութիւններու մէջ կնքուած զինադադարը նկատի ունի:

Ղազար Փարպեցոյ տեղեկութիւններն, ըստ այսմ, ունին իրենց պատմական եւ ժամանակագրական հիմերը:

Անատոլիոսի երեւումը պատմութեան մէջ արդէն 421ին տարօրինակ պէտք չէ երեւալ: Պրոկոպիոսի բացատրութիւնը, թէ նա իբրեւ δ τῆς ἔω στρατηγός = militum per Orientem magister ներկայացաւ Վռամի կ'արդարացնէ Կորիւն (էջ 27), որ պատմելով Մաշտոցի ճանապարհորդութեան մասին դէպի Կ. Պոլիս, կը գրէ թէ ճանապարհին պատուեցաւ «յեպիսկոպոսաց աշխարհին եւ յիշխանաց եւ ի գաւառականացն», «մասնաւոր ի սպայապետէն աշխարհին, որ անուանեալ կոչէր Անատոլի(ոս) ի մուտ(ս) ճանապարհին»:

<sup>19</sup> Հմմտ. Ceiller, Histoire générale des auteurs sacrés, XIV (Paris 1767), p. 633—634. E. Schwarz, Der Prozeß des Eutyches. München 1929, էջ 79—87: Ճիշդ կը գովէ իր ճարտարութիւնն եւ եկեղեցական-քաղաքական ինչպէս եւ վարդապետական խնդրոց մէջ իր լայն հայեացքները (անդ, էջ 85):

պարհին (այս ինքն ի սահմանս) . որ զիրս առաջի եղեալ գրով՝ ցուցանէր Կայսերն, որում թէնդոս կոչէին, որդի Արկադու Կայսեր» : Մաշտոցի երթն ի Կ. Պոլիս տեղի ունեցաւ հաւանօրէն 422ին, պատերազմէն ետքը (P. Peeters, Revue des Études arméniennes, IX, 210) : Կորիւնի «սպարապետ» Ղազար կ'անուանէ «սպարապետ» . Եղիշէի «սպարապետն Արեւելից» աւելի համապատասխան է Պրոկոպեայ օ տիς ξω στρατηγόςի . Մ. Սորենացի, որ յաճախ կը յիշէ Անատոլիոս անունը, ամէն անգամ «գորավար» կը կոչէ : Արեւելից սպարապետին մնայուն բանակատեղն էր Անտիօք . ուստի Ղազարի «սպարապետն Անտիօքայ» ուղիղ է նաեւ այս տեսակէտով : Ճիշդ այս ժամանակ էր, որ Անատոլիոս ապաստան տուաւ արար ցեղապետին՝ Ասպահապետին (Aspebetos), որ Վոամ Ե.ի հարձանքներու ժամանակ նպաստած էր Պարսկաստանի քրիստոնէաներու փախուստին (Վարք Ս. Եւթիմիոսի, Cotelier, Analecta graeca, էջ 19—20. հմմտ. Peeters, անդ, 211) :

Անատոլիոս 440ին հիւպատոս էր Վաղենտինոսի հետ (Marcellinus Comes) : Եղեւսիայի ժամանակագիրը յամն 753 (= 441/42) կը գրէ թէ «Անատոլիոս ստրատելատ յօրինեաց արկղ արծաթեայ ի պատիւ ոսկերաց Ս. Թովմայի առաքելոյ» (Assemani, Bibl. Or., I. էջ 199) . կ'երեւայ թէ այս թուին իբրեւ սպարապետ դարձեալ Արեւելք եկած էր : 448—451 տարիներուն ապրած է յաճախակի թղթակցութեանց մէջ թէնդորեաի հետ, որուն մտերիմ բարեկամն էր եւ պաշտպանը : 448ին ուղարկուած է թէնդոսէն Ատտիլայի ճամբարը, խօսելու հաշտութեան մասին . Ատտիլա կը ճանչնար յանձին Անատոլիոսի միակ զեպանը, որուն հետ կարելի էր բանակցել (Պրիսկոս, էջ 142—214) : 450—451ին Մարկիանոսի հրամանաւ ներկայ էր Քաղկեդոնի Ժողովին : Բոլոր ժամանակ պահպանած է իր անուան կից «սպարապետ» յորջորջանքը : Սուրբաս (էջ 378) իւր Անուանց բառարանին մէջ յիշատակած է զինքը իբրեւ «պատուասէր» նկարագրի տէր մարդ <sup>20</sup> :

<sup>20</sup> Անատոլիոսի մասին, յատկապէս իր եւ թէնդորեի աղերսի նկատմամբ հմմտ. R. Aigrainի յուսածն ի Dictionnaire d'histoire et de géographie ecclésiastiques. Paris, t. II (1914), p. 1496/7 :

Իբրեւ եղրակացութիւն պիտի հետեւցընենք .

1. 421—450 շրջանին Պարսկաստանի եւ Բիւզանդիոնի միջեւ քաղաքական բարդութիւններ տեղի չեն ունեցած : «Ի բազում ժամանակաց դրեալ եւ կնքեալ էր առաջին թաղաւորացն ուխտ եւ հաստատութիւն» (խաղաղութիւն) . նոյն խաղաղութիւնը, որ կը շարունակուէր, չուղեց Մարկիանոս եղծանել :

2. Տարարի յիշած արշաւանքը դէպի Հռովմէական սահմանները Միհր-Ներսէսի առաջնորդութեամբ հաւանօրէն ակնարկութիւն մըն է 421ի կողմի մասին : Յամենայն դէպս կապ չունի նոյն Պրոկոպիոսի յիշած պատերազմի հետ, որ տեղի ունեցած էր Վոամ Ե.ի օրով :

3. Եղիշէի նկարագրած արիւնահեղ, գերող գերիւոյ պատերազմը չէ մղուած ոչ Յազկերտ Բ.էն եւ ոչ Ե. դարու ընթացքին :

4. Յազկերտ Բ. որ Քուշաններու դէմ գրադած էր, դժուարաւ թէ գտնէր ժամանակ Հռովմայեցոց դէմ ալ նոր պատերազմ հրատարակելու : Միւս կողմանէ նաեւ Հռովմայեցիք — որոնց վղին նստած էր Ատտիլա — չնորհակալ միայն կրնային ըլլալ Յազկերտին, որ զիրենք հանդիստ կը ձգէր :

Հարցնենք այժմ . ի՞նչ պարսկական-հռովմէական պատերազմ էր այն, որուն մասին կը գրէր Եղիշէ :

Այնպէս բացայայտ են պատմագրին տողերը այս տեղ, որ շատ գլուխ յոգնեցնել պէտք չկայ վերահասու ըլլալու համար իրողութիւններուն : Բայց ես չեմ կրնար չյայտնել զարմանքս թէ ինչպէս Եղիշէի քննադատները չէին անդրադարձած անոր մինչեւ այսօր : Աւելի շօշափելի կողման քան որ կու տայ այս հաստատութիւն մէջ մեզի Եղիշէ, չէր կրնար սպասուիլ : Սկզբնաղբի Եղիշէի մէկ հատուածն է պահպանուած հոն, թէպէտ տեղ տեղ խանգարուած, բայց կարելի է անաշխատ վերականգնել : 540—562 տարիներուն նկարագրուած հոն, համառօտիւ, բայց ճշգրիտ :

Արքայից արքայի նկարագրին ծանօթանալէ եւ անոր դէմքը ճանչնալէ ետքը բնականաբար մեծ աշխատութիւն պիտի չարժէ խելամուտ ըլլալ նաեւ գործերուն : Որովհետեւ մեր ծրագիրն է Եղիշէի վերլուծելն յետոյ ներկայացնել համառօտ պատմութիւնը

հայ, պարսիկ եւ հռովմէական աշխարհներու փոխյարաբերութիւններու 2. դարումէջ, այս տեղ պատմական անցքերու կարեւոր կէտերը միայն յառաջ պիտի բերեմ, որքան անոնք հարկաւոր են վերլուծական լուսարանութիւններու համար :

Լսենք միւսանգամ Եղիշէն իր խօսքերով . ա. Բանգի յոյժ սիրելի էր նմա խոռովութիւն, արիւնհեղութիւն, վասն այնորիկ յամն իւր տարաբերէր, եթէ յո՛ր քափեցից գղաւնութիւն թիւնից կամ ուր բացատրեցից գրագումութիւն նետից :

Մագդակեանց ահաւոր կոտորածը, արքայորդիներու եւ անոնց զաւակներու սպառնալու ջնջումը, նախարարներու եւ արքայորդաց կուսակիցներու սպանութիւնը, բաւական էին արդէն նշմարելու Սոսրովի աչքերու մէջ խռովասիրութիւնն եւ արիւնհեղութեան անյազուրդ տենչը : Ասոնք 531—539 տարիները լեցուցին : 539ի պատրաստութիւններն արշաւելու Հռովմէական երկիրները, կը դուշակէին արքայից արքայի պատերազմասէր ձգտումները .

բ. «Եւ առ յոյժ յիմարութեան իբրեւ զգաւան մի կատաղի յարձակեցաւ ի վերայ աշխարհին Յուսաց . եհար մինչ ի քաղաքն Մծբին . եւ զբազում գաւառս Հոռոմոց աւերեաց սպառակաւ . եւ զամենայն եկեղեցիս հրձիգ արար, կուտեաց գաւար եւ զգերի . եւ ահաբեկ արար զամենայն գօրս աշխարհին» :

540ի արշաւանքին նկարագրութիւնն է, համառօտ բայց կուտ բովանդակութեամբ : Առանց զիմացը թշնամի ունենալու յարձակեցաւ Սոսրով Միջագետք, Եփրատն ի վեր, այրեց, աւերեց գետեզերեայ քաղաքներն եւ գաւառները, յատկապէս հոյակապ մայրաքաղաքն Ասորոց Մեծն Անտիօք, որուն բնակչութեան մէկ մասը կոտորեց եւ մնացորդն փոխադրեց Տիգրոնի մօտ, կառուցանելու Նոր Անտիօքը . աւերեց կործանեց հոյակապ եկեղեցիները . խաղացուց բազմաթիւ գերիներ եւ շատ աւար Պարսկաստան : «Եհար մինչ ի քաղաքն Մծբին» պէտք է հասկնալ Սոսրովի առաջին արշաւանքին վերջին կէտը՝ Դարան, որ կը գտնուէր հանդէպ Մծբինի : Մծբին արդէն սահմանաքաղաքն էր Պարսից . եւ ճիշդ է պատմագրին բացատրութիւնը «Եհար մինչեւ ի քաղաքն Մծբին», նկատելով որ Սոսրով հարաւէն կու գար սպառնակաւ դէպի Դարա հռովմէական

բերդաքաղաքը սահմանին վրայ՝ ի մօտաւորութեան Մծբինի <sup>21</sup> : Հռովմէական տկար պահակազօրքը սահմանին վրայ եւ Միջագետքի ամրութիւններու մէջ ահաբեկած էր արքայից արքայի հօր բանակին առջեւ եւ չէր ցուցուցած մեծ դիմադրութիւն :

Այս արշաւանքներու հակիրճ, բայց բովանդակալից նկարագրութիւնը տուած է Dihl <sup>22</sup> հետեւեալ խօսքերով . «Սոսրով յարձակեցաւ Ասորիքի վրայ եւ հուրի եւ արիւնի մատնեց զայն, հարստահարելով քաղաքներն, որոնք ըստ մեծի մասին անկարող էին դիմակալել, նուաճելով բնութեամբ այն վայրերն, որոնք կը համարձակէին դիմադրութիւն ցոյց տալ, կոտորելով կամ գերի վարելով բնակիչները : Այսպէս աւարարելով, քանդելով ամենայն ինչ իւր ճանապարհէ վրայ յառաջացաւ մինչեւ Անտիօք, արեւելքի ամէնէն գեղեցիկ եւ հարուստ քաղաքը . Ասորիքի այս մայրաքաղաքը, որ կարճ դիմադրութեանէ ետքը ինկաւ յաղթականին ձեռքը, տեսաւ պատերազմի բոլոր արհաւիրքներն եւ սարսափը . կողոպտուեցան եկեղեցիները, այրացաւ սպականեցան շէնքերը, բնակչութիւնը, գոնէ որչափ ազատած էր կոտորածէն, փոխադրուեցաւ գերութեամբ յայնկոյ Եփրատի (ուր շինուեցաւ սպա Նոր Անտիօքը) : Քանի կը յառաջանար Սոսրով Միջագետք առ երեւոյթ նուաճումներով կայսերական զօրավարներն ահաբեկած՝ հանդիսատես միայն էին այս հարուածներուն» :

գ. «Իսկ երանելին Թէոդոս Կայսր, քանզի յապաղաւէր էր ի Քրիստոս, ոչ կամեցաւ եղանել ընդ առաջ պատերազմաւ . այլ այր մի Անատոլ անուն, որ էր նորա սպարապետ արեւելից, առաքեաց առ նա բազում գանձիւք» :

«Երանելին Թէոդոս Կայսր», ինչպէս նաեւ «Անատոլ . . . որ էր նորա սպարապետ արեւելից» խմբագրչին ձեռքէն փոփոխութիւններ են Սկզբնաղբին մէջ : Սօսր Յուստինիանոս Ա. Կայսեր մասին է . որ ոչ թէ «բանգի խաղաղասէր էր» այլ վասն զի իւր բանակն զբաղցուցած Իտալիա եւ Ափրիկէ,

<sup>21</sup> Այլազգ հարկ պիտի ըլլայ կարծել թէ Մծբին հռովմէական հող է եւ արքայից արքայն յառաջացած է մինչեւ Մծբին սպառնակելով : Յովհանու (363) կնքած դաշինքէն յետոյ Մծբին մնաց միշտ Պարսկական սահմանաքաղաք : Հռովմէական յաճախակի փորձերը յրեթացս 2. դարու առաջին կէսին՝ դրաւ Մծբինը, մնացած էին սպարապետն : <sup>22</sup> Dihl, Justinien, Paris 1901, p. 215.

անպաշտպան ճգած էր Արեւելքը. եւ երբ անգոր տեսաւ ինք զինքը կրկին ռազմազա- տերու՝ արեւմուտք եւ արեւելք տէր ըլլալ, փութաց դեսպաններ հանելով Սոսրովու ա- ուա՛ խաղաղեցնել փորձել անոր բարկու- թիւնը: Առաջին պատգամաւորութիւնը ըն- դունեցաւ Սոսրով Անտիոքի աւերակներու վրայ: Յաճախ կրկնուեցան այնուհետեւ պատգամազնացութիւնք Կայսեր կողմանէ, որ օր յառաջ կը բաղձար խաղաղած տեսնել Արեւելքը եւ պատրաստ էր խաղաղասիրական առաջարկութիւններով հնարաւորութեան չա- փին մէջ բաւականութիւն տալ պատերազմա- սէր եւ գոռոզ պարսկին: Դեռ պատերազմը չսկսած ուղարկուած էր Անաստաս Տիգրան, եւ կեցնելու Սոսրով պատերազմական պատ- րաստութիւններէն: Անտիոքի առջեւ երեւ- ցաւ նոյն Անաստաս զինադադար եւ խաղա- ղութիւն առաջարկելու. եւ ի վերջոյ Կոս- տանդին եւ Սարգիս ներկայացան Սոսրովին նոյն նպատակով եւ ի գլուխ հանեցին 562ի մշտնջենաւոր խաղաղութիւնը: Յուստինիա- նոս զիջած էր հնգամեայ զինադադարին (556—561) համար տալ ամէն տարի 400 լիտր ոսկի (ուստի ընդ ամէնը 20.000 լիտր ոսկի): Նաեւ 562ի խաղաղութիւնը դրած էր Հռովմայեցւոց վրայ պարտաւորութիւն վճա- րել տարեկան որոշ գումար մը: Ուստի ըմբռնելի կ'ըլլայ նաեւ դեսպանին «առա- քունն առ նա բազում գանձիւք»:

դ. «Եւ արք պարսիկք, որք փախուցեալ էին վասն քրիստոնէութեան, եւ էին ի քա- ղաքին Կայսեր, կալաւ եւ ետ (Յուստինիա- նոս) ի ձեռս նորա»:

Այս պարբերութիւնը կ'ականարկէ 562ի մշտնջենաւոր խաղաղութեան դաշինքի վե- ցերորդ կէտը. առ այս կը գրէ Կ. Գիւտեր- բոք (Բիւզանդիոն եւ Պարսկաստան, էջ 104— 107):

«Երկու պետութեանց մէջ ալ պատերազ- մէն ի վեր շատ մը փախստականներ կը գտնուէին, որոնց մէկ մասը դատաւիք էր, միւսը անձինք, որ քաղաքական եւ կամ կրօ- նական պատճառէ մը գրգռել թշնամի եր- կրին մէջ ապաւինած եւ ապաստան գտած էին»<sup>23</sup>: ...

<sup>23</sup> Այսպէս բիւզանդական արքունեաց մէջ ապաս- տան գտած էր պարսիկ Կաւատ իշխանը, որ իրրեւ դասի հետամուտ՝ Սոսրովու դէմ դաւաճանութեան մը մասնակցած էր եւ յետոյ Ներսէսի տակ Գոթաց դէմ պատերազմ մղեց:

Բոլոր այս փախստականներուն՝ խաղա- ղութեան դաշինքովը (Թ. 6) անարգել թոյլ տրուեցաւ իրենց հայրենիքը դառնալ եւ ա- մէն պատժէ ազատ կացուցուեցան:

Բայց պատերազմի ժամանակ բռնուած դերիններու փոխանակութեան մասին դա- շինքի մէջ որ եւ իցէ որոշում չկայ:

Ե. «Եւ գաւեմայն գոր ինչ ասաց (Խոս- րով) ի ժամանակին՝ կատարեաց (Յուստի- նիանոս) ըստ կամաց նորա, եւ արգել զնա ի բազում բարկութեան. եւ դարձաւ անդրէն յիւր քաղաքն Տիգրան»:

Գոթաց ապստամբութեան հետեւու- թեամբ վտանգուած էին Կայսեր պետութեան հիմքերը. եւ ամէն զնով կը բաղձար Յուս- տինիանոս խաղաղած տեսնել Արեւելքը: 540—562 տարիներուն վարուած բանակցու- թիւնները ցոյց կու տան թէ որքան զիջողու- թեամբ կ'ընթանար Կայսրը Սոսրովի հան- դէպ: Արդեամբք ալ պարսիկը ստացաւ այն ինչ կը ցանկար<sup>24</sup>: Նոյն իսկ հեթանոս փիլի- սոփաներու մասին պահանջուած հանդուրժու- ղութիւնը լսելի եղաւ Կայսեր կողմէն:

Այս պատերազմներու արձագանդներն են Եղիշէի հետեւեալ տեղիքները. Արքայից ար- քայն իւր «առ ամենայն ազգս տէրութեան», յատկապէս առ Հայս, Վիրս, Աղուանս եւ հարաւակողման ժողովուրդները (Աղձնիք եւն) գրած հրովարտակին մէջ, անմիջապէս այս յաղթութիւններէն ետքը (562), կը յայ- տարարէր. «Առանց զձեզ ինչ աշխատ առնե- լոյ՝ խաղացաք գնացաք յերկիրն Յուսաց, եւ առանց գործոյ պատերազմի՝ սիրով մարդա- սիրութեամբ նուաճեցաք գաւեմայն երկիրն մեզ ի ծառայութիւն» (էջ 9—10):

<sup>24</sup> Նոյն ինքն Ներսէս, քրիստոնեայ պարսկահայ մը, բազմաթիւ համախոհ հայրենակիցներու հետ փախուտ տալով՝ զերծած էր պարսկական իշխանութիւնէն եւ Բիւզանդիոնի պաշտպանութեան ապաւինած: Միւս կողմանէ հայ նախարարք ալ, որոնք Յուստինիանէն ապստամբած էին, Սոսրովու քով պատրաստակամ ընդունելութիւն գտած էին (Գիւտերբոք, 104—105):

<sup>25</sup> Այս ինքն ձեռք բերել տարեւոր դուժար մը Կաւկասեան եւ Կասպեան դռներու պահպանութեան համար: Կաւատ, Սոսրովի հայրը այս վճարքը պա- հանջելու համար սկսած էր 501ի պատերազմները, որոնք սակաւատեւ ընդհատութեամբ երկարած էին մինչեւ Սոսրովի գահակալութիւնը: Նաեւ Սոսրովի արշաւանքներու փախճանն էր աւելի հարստացնել արքունի գանձարանը քան նոր նուաճումներով ըն- դարձակել երկրին սահմանները: 562ի դաշնադրու- թեամբ վերահաստատուեցան հին սահմանները ա- ուանց կարեւոր փոփոխութեան: Միակ արգիւնքը, որ կը մնար արքայից արքային 540—562ի կռիւներէն, էր Կայսեր կողմէն իրեն հասնելիք տարեւոր դուժարն եւ աշխարհակալ թագաւորի համբարը:

Հայք եւ հարաւայինք երբ արքային զօրա- կոչի մասին այս հրամանը կ'ընդունին, կը սարսափին, բայց «իրբեւ բեկեալ տեսին զգօ- ռութիւնն Յուսաց առաջի նորա՝ յոյժ հա- րեալ խոցեցան ի խորհուրդս իւրեանց» (էջ 11):

Ամբողջ այս ա— Ե հատուածները դասա- կան ապացոյցներ են, թէ Եղիշէի նկատի առած «Իշխանը» միայն Սոսրով Ա. Անուշ- ըռուան կրնայ ըլլալ, եւ ակնարկուած դէպ- քերը 540—562ի պարսիկ—հռովմէական պա- տերազմի պատմութենէն էջեր են:

(Շարունակելի:)



ՍԵՊՏԵՄԲԵՐ

ՀԱԹԵՐ ԵՒ ՈՒՐԱՐՏԵԱՆՔ

ՄԱՏԵՆՆԳԻՏԵԱՆՔ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

(Շարունակում թիւնն:)

8. — Դառնանք Հնդկեւերոպականին եւ Սումերականին միջեւ եղած կամ ենթա- դրուած աղբյուրն: Այս մասին կան զանազան գրութիւններ, որոնց մէջ կարեւորագոյն երկն է Օտրանի այն գործն՝ որուն խորագիրն է «Սումերականն ու Հնդկեւերոպականը. ինչոպէս ձեւախօսական կերպարանքը»<sup>128</sup>: Հեղինակը կը քննէ ու կը համեմատէ թէ՛ հնդկեւեր.—սումերական բառազանձը, եւ թէ՛ քերականական ձեւերը հասնելու այն եզրա- կացութեան թէ բաւական ընդարձակ չափով ազգակցութիւն կայ արմատներու մէջ, ինչ- պէս կայ նաեւ քերականական աղբյուր մը. նոյնպէս կայ Հնդկեւերոպականին եւ Ուզբո- Քիննականին միջեւ: Ուստի վերջնական եզ- րակացութիւնն ա՛յն է թէ Սումերականն այն տարրներէն մին է՝ որոնք այն վաղնջուց ժա- մանակի մէջ Հնդկեւերոպականին կազմուե- լու են սատարած են: Խնդիրն այն վիճակին մէջն է որ նաեւ անոնք՝ որոնք Հնդկեւերո- պականին ու Սումերականին մէջ ուղղակի աղբյուր մը չեն ուղեր ընդունիլ, այլ աւելի միջնորդական աղբյուր մը (Նախասեմական—

Քամեանի, «Կաւկասեանի» եւն միջնորդու- թեամբ), դոնէ կ'ընդունին թէ միեւնոյն կամ ազգակից տարրներ նպաստած ըլլան կազմե- լու մէկ կողմանէ Հնդկեւերոպականն եւ միւս կողմանէ Սումերականը: — Բնական էր նոյնպէս որ սեմադէսներու մէկ մասը դիւ- ռաւ չընդունէր Հեղինակին ուրիշ մէկ գրու- թեան եզրակացութիւնն, ուր կը ջանայ Փոքր—Ասիոյ եւ յատկապէս Քանանու սեմա- կանին մէջ գտնել հաւանական հետքեր ազ- դեցութեան Հնդկեւերոպականին եւ «միջեր- կրական բառարանին»<sup>129</sup>: Այսպէս կամ այն- պէս այս խնդրոյս հետ կապ ունի նաեւ միւս գործը՝ Յունական անուանց մասին, որ բնա- կանապէս կը վերաբերի նոյնպէս եզգական- պեղատեան—փոքրասիական խնդրոց համե- մատութեամբ յունական եւ Փոքր—Ասիոյ հին լեզուներու անուանց<sup>130</sup>: Եւ ճշգիւ այս գոր- ծին մէջ հաւաքած ատաղձը դործածած է օրինակի համար ուրիշ հեղինակ մը՝ որ հա- կառակ այլեւայլ լաւ դիտողութեանց, մէտ է ամէն կողմ «կաւկասեան» հետքեր գտնելու, իւր գրուածքին մէջ՝ «Ծովաբնակ ազգաց ա- նունները հին—արեւելեան աղբյուրաց մէջ<sup>131</sup>: Յիշելու համար օրինակ մը՝ վերջին հեղինա- կիս տեսութեամբ անուանց մէջ գտնուող դրեթէ բոլոր —op-, —pe եւ նման վանկերն (օրինակ՝ Պելոպոնէս», «Ներպալէ» եւն) ան- պատճառ «կաւկասեան pi/bi յոգնակոյ ա- ւարտներ» ըլլան, ի հարկէ նաեւ —nadi (այս- պէս ըլլայ նաեւ «Սալդի») եւ la վանկերը, որոնք յիշեցնեն ինչպէս վրականին —ebi, նոյնպէս ուրիշ կաւկասեանց՝ —ni, եւ ni յոգնա- կին, նոյնպէս վրական մասնիկս —eti եւն: Ար- դէն այս ամէնն է զլիսուոր կարծեալ ապա- ցոյցն եւ միշտ կրկնուած, որով բոլոր հին լե- զուներն, ուր այսպիսի վանկեր կը գտնուին, «կաւկասեան» կը հռչակուին՝ նոյն դադա- վարաւ այլեւայլ դիտող կողմանէ: Զիարդ եւ է՝ դառնալով դարձեալ նոյն Օտրան զիտ- նոյն՝ յիշենք նաեւ իւր գործը «Տարկունդի- մոսի» ծանօթ կնքոյն մասին, որ պատկերա—

<sup>129</sup> Charles Autran, De quelques vestiges probables méconnus jusqu'ici du lexique méditerranéen dans le Semitique d'Asie Mineure et notamment de Canaan. Paris 1926, pp. 79 (= JA.).

<sup>130</sup> C. Autran, Introduction à l'étude du Nom propre Grec. Fasc. 1—7. Paris 1925—1928, pp. 560 (չարունակելի):

<sup>131</sup> Rob. Eisler, Die «Seevölker»-Namen in den altorientalischen Quellen: «Caucasica», fasc. 5, p. 73—130. — այլեւայլ կարծիքներ առիթ կ'ըլլայ յիշելու:

<sup>128</sup> C. Autran, Sumérien et Indo-Européen: l'aspect morphologique de la question. Paris 1925, pp. LXII + 199.